# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

«07» նոյեմբերի 2018թ. Թիվ 225

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

## ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 02-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 32-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ համայնքի ավագանու նշված որոշումը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, համայնքի ղեկավարի համապատասխան գրությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 38 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

07.11.2018թ.
գ.Հացիկ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.24/20513-18
08 — 11 — 2018

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» նոյեմբերի 2018թվականի N 32-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

<u>Բյուջեի եկամտային մասում՝</u>

Տող 1112՝ հողի հարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող հողի համար, պակասեցնել 4140.0 հազար դրամով՝ սահմանելով 16057,0 հազար դրամ.

Տող 1392՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր, պակասեցնել 3640.0 հազար դրամով՝ սահմանելով 120.0 հազար դրամ:

<u>Բյուջեի ծախսային մասում</u> ՝

1 բաժին 6 խումբ 1 դասում՝ 5121 հոդվածը պակասեցնել 4090.0 հազար դրամով՝ սահմանելով 1210.0 հազար դրամ. 5113 հոդվածն ավելացնել 450.0 հազար դրամով՝ սահմանելով 6308.3 հազար դրամ:

11 բաժին 1 խումբ 1 դասում ՝ պահուստային ֆոնդ, 4891 հոդվածը պակասեցնել 4140.0 հազար դրամով՝ սահմանելով 4504.1 հազար դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արգամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Զիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

02.11.2018թ.

գյուղ Հացիկ